

Հովհաննիս վսեմ պարզութեան իսկական ժողովրդասիրութեան և ինչպէս զարգարում է այդ բոլոր առաքինութիւններն այն անկեղծ, քերական կրօնական ոգին որով այնպէս զօրաւոր է հանդիսանում Հայրիկը:

Մայր Աթոռի հոգեւոր ծեմարանը որ առատապէս վայելում է Հայոց Հայրիկի առանձին խնամքն ու հովանաւորութիւնը, անշուշտ հրձուանօք պիտի ողջունէր իւր Հոգեւոր Տիրոջ ու հայրախնամ Հովանաւորի ծննդեան տարեդարձը, որեւորուելով այն ըզգացմունքներովն ու սկզբունքներով, որ այդ ութսունամեայ բազմաբեղուն կեանքի առաջնորդն են եղել: Եւ ահա կապելով այդ ուրախալից օրուան հետ և Հայրիկի գրական նական գործունէութեան յիսնամեակի տօնը, Գեորգեան ժեմարանի վարչութիւնը ապրիլ 4-ի երեկոյեան պատրաստեց մի գրական հանդէս ուսուցիչների և ուսանողների մասնակցութեամբ և ներկայութեամբ Մայր Աթոռի Միաբանութեան մի քանի անդամների: Զ. դաստառն մի աշակերտ, Վանեցի, համառօտ կենսագրական տեղեկութիւններ հաղորդելով՝ նկարագրեց Հայրիկի գործունէութիւնը Վարադում: Բ. յարանի ուսանողներից մէկը կարդաց մի աշխատութիւն հայկական տաղաչափութեան մասին, ցոյց տալով թէ ինչպէս է գործադրել Վեհափառ բանաստեղծըն այդ չափն իւր երկու «Հրաւիրակների» մէջ և օրինակ բերեց վերջում այդ չափով գրած Հայոց Հայրիկի առաջին ոտանաւորը, որ նուիրել է չափը յօրինող Հ. Ա. Բագրատունուն: Կարդացին ապա մի ընտիր հատուած «Վանգոյժ»ից և մի քանի պատշաճ ոտանաւորներ: Դոցանից յետոյ ամբիոն բարձրացաւ ժեմարանի ուսուցիչ պ. Մ. Արեղեանը և կարդաց մի մանրամասն ուսումնասիրութիւն Հայրիկի «Հրաւիրակների» մասին, որոնց բովանդակութիւնը, գաղափարները և գրականական արժէքը բացատրեց: Հ. Կոմիտաս վ.-ի առաջնորդութեամբ երգեցիկ խումբը ներդաշնակ կերպով երգեց Հայրիկին նուիրուած երգեր:

Հանդէսը փակեց ժեմարանի տեսուչ հ.

Կարապետ վարդապետը, մի քանի սրտառուչ խօսքերով յորդորելով ժեմ. սաներին միշտ ձգտել օրինակ առնելու իրենց առաջ պատկերացրած փառաւոր կեանքից ու գործունէութիւնից, բարեմաղթեց երկար օրեր ծերունազարդ Հայրապետին և կատարումն իւր բարի ըղձերին:

Միահամուռ «կեցցէ՛ի» թնդիւնը պատասխան եղաւ այդ բարեմաղթութեանց:

Շոյն օրը ժեմարանի հայր Տեսուչը հեռագրով շնորհաւորեց Վեհափառ Հայրիկի ծննդեան տօնը ժեմարանի ուսուցչական խումբի և աշակերտների կողմից:

ՏԱՃԿԱՀԱՅՔ.

Խարեբեղէն շատ տարօրինակ լուր մը կը հասնի մեզի. Պետրոս Պօղոսեան անուն միսիոնար մը հրաժարեցուցուեց է իր պաշտօնէն՝ հետեալ ծանր (°) յանցանքները գործած ըլլալուն համար: Ա.—Լուսաւորչականներու հետ մտերմօրէն կը տեսնուի եղեր: Բ.—Երբեմն երբեմն Լուսաւորչականներու եկեղեցին կերթայ եղեր: Գ.—Տօն ու կերակի օրերը, առաւել իրենց, իր խնամքին յանձնուած որբերը իրենց մայրենի եկեղեցին կը տանի եղեր աղօթելու: Դ.—Օրին մէկը որբերէն երկուքը մեռեր են հիւանդութեան հետեանքով, ու Պ. Պետրոս Պօղոսեան անոնց ծնօղքին կամ աղգականին կամքը հարցնելէ ետքը արտօնեց է որ թաղման կարգը քահանան կատարէ: Բոլոր ատոնց հետեանքով Պ. Պօղոսեան պաշտօնանկ իրաւաւ առանց այլալայլի:

—Կիլիկիոյ կաթողիկոսական ըմբռնքիւնը. Խապայեան Տ. Սահակ եպիսկոպոսէ հեռագիր մը հասած է Պատրիարքարան, որ կը ծանուցանէ թէ իր պաշտօնին վերաբերեալ հրահանգները ստացած է: Խապայեան Սրբազան նոյն հեռագրով կը ծանուցանէ թէ Սիւրի Կաթող. Տեղապահ Տ. Կիրակոս եպիսկ. իրմէ առաջ ընտրութեան նախնական գործողութեանց ձեռնարկեր է և պատգամաւորները հրաւիրեր է մարտ 10 յառաջիկայ ուրբաթ օրը Ատանա գտնուիլ ընտրական գործողութեանց ձեռնարկուելու համար: Խապայեան Սրբազան այս տեղեկութիւնները հաղորդելով, նոր հրահանգ խնդրած է Ս. Պատրիարք Լօրմէն: Ս. Պատրիարք Հայրը անմիջապէս հեռագրեց թէ ընտրութեան հսկելու պաշտօնը իրն է (Խապայեան Սրբազանին), հետեալապէս պէտք է ընտրա-

կան հրահանգին համաձայն ուշագիւր ըլլայ ընտրողները ամբողջովին հրաւիրելու: Ս. Պատրիարք Հայրը հեռագրաւ հրահանգ տուաւ նաև ընտրողական ժողովը գումարել ոչ թէ մարտ 10-ին, այլ 14-ին. այդ օրը կերակի ըլլալով ալ աւելի յարմար պիտի գայ գումարման:

— Երուսաղէմի Ս. Աթոռոյն Միաբանութիւնը կորուստ մըն ալ ունեցաւ յանձին Տ. Աստուածատուր եպօ. Տէր Յովհաննէսեանի: Նա հեռացաւ թողով յիշատակի իր բարի անունը և իր երկհատոր ժամանակագրական Երուսաղէմի Պատմութիւնը: Աստուածատուր եպիսկոպոս Խարբեբէի Քէսէրէի գիւղը ծնած է 1830-ին, հողագործ բարեկեցիկ ընտանիքի մը զաւակն էր, անած ու ապրած չարքաշ կեանքի մը մէջ, Ի տղայ տիոց մեծ սէր ու իրաւաբ ունենալով եկեղեցականութեան, 1852-ին Երեմիա եպիսկոպոսին հետ կուգայ Ս. Աթոռ և կընդունուի ի շարք միաբանութեան: Աստուածատուր Սրբազան ի ընէ աշխատաւոր ու ուշիմ, քիչ ժամանակուան մէջ կը գրաւէ Ս. Պատրիարքի համակրութիւնը: Մէկ տարիէն կը ձեռնադրուի սարկաւազ բազմերախտ Յովհաննէս Պատրիարքէն, ինչպէս վարդապետական կոչում կընդունի նոյն Պատրիարքէն 1857-ին՝ տասն ընկերներով, որոնց մեծ մասը եպիսկոպոսանալով իրմէ առաջ վախճանած են: Հանգուցեալ Աստուածատուր Սրբազան իր օժակեցներուն մէջ է՝ աշխատասէրն ու զարգացեալն էր, ինքնօգնութեան տիպար: Իր մենակեացի խցիկին մէջ աշխատելով ձեռք բերած էր, բացի իր մայրենի լեզուէն, Թուրքերէն, Արաբերէն և Փրանսերէն լեզուները: Աւելի հմուտ էր ու կը սիրէր առաջին երկու լեզուները, որոնցմէ ունի ապեալ և անտիպ թարգմանութիւններ: Հայերէնը ուսած էր միայն դասառութեամբ ժամանակին ծանօթ հայկաբան Սիմէօն վրդպէն: Հանգուցեալ Սրբազանը վարած է Ս. Աթոռոյն մէջ զանազան պաշտօններ, օրինակի համար Եպսկի ժամարարութիւն, Պէյրութի և Յոպպէի վանքերուն տեսչութիւն, թարգմանութիւն, կալուածոց տեսչութիւն յեգիպոս: Քանիցս անգամակցած է Տնօրէն ժողովոյ, որու մէջ կընցէ Սրբազանը իր երկրաւոր կեանքը 70 տարեկան հասակին մէջ: Ժամանակի վարչութիւնը գնահատելով հանգուցեալ Սրբազանին ձիրքերն ու կատարած աշխատութիւնները, 1876-ին կը զրկէ եպիսկոպոսութեան, և կձեռնադրուի Տ. Գէորգ Դ. բազմաբնիկ հայրապետէն: Աստուածատուր Սրբազան կը թողու Ս. Աթոռին տուն մը և երկու խանութ, որոնցմէ կը գոյանայ տարեկան մօտաւորապէս հարիւր ոսկի:

Հանգուցեալ Սրբազանին օժումը կատարեր է Տ. Յարութիւն Ս. Պատրիարքը, որ իսկապէս

զգաճուած դամբանական մըն ալ խօսեր է:

— Խառն Ժողովի 3 մարտ նիստին մէջ, որ գումարուեցաւ Ղալաթիոյ Խորհրդարանը, նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր և առանապետութեամբ Առանձնեան Ստեփան փաշայի, նկատողութեան առնուեցան հետեւեալ խնդիրները:

Էրզրումի առաջն. տեղապահ Տ. Զաւէն Ծ. վարդապետ իր կրկին տեղեկագիրներով յայտնած էր տեղւոյն մէկ քանի գիւղերու ժողովրդեան օրթոթոքսութեան յարած ըլլալը և այդ դաւանափոխութեան շարժառիթը: Տ. Զաւէն Ծ. Վ. երբորդ տեղեկագրով մըն ալ յայտնած էր թէ դաւառային Վարչութեան և տեղւոյն Վսեմ. կուսակալին ձեռք առած միջոցներուն շնորհիւ այդ դաւանափոխութեան հոսանքին առաջը առնուած է: Ժողովը զօհ եղաւ ձեռք բերուած այդ յաջողութիւններուն համար և որոշեց գոհունակութեան և քաջաբերական գիր մը ուղղել Էրզրումի դաւառային վարչութեան:


Տ. Զաւէն Ծ. Վ. զիր մըն ալ ուղղած էր Պատրիարքարան՝ որով յայտնելով Էրզրումի բազմապահանջ վիճակ մը ըլլալը, կըսէր թէ ինքզինքը անկարող կը զգայ վիճակին ամէն կարգի գործերուն հասնելու և պէտք եղած կերպով իր հովուական պաշտօնը լիովին կատարելու. այս առթիւ խնդրած էր որ իր հրաժարականը ընդունուի և իրեն աւելի փոքր վիճակ մը յանձնուի: Տ. Զաւէն Ծ. վարդապետ խնդրած էր նաև որ եթէ կարելի է, Էրզրումի առաջնորդի ընտրութեան հրահանգ զրկուի: Ժողովը նկատելով որ Տ. Զաւէն Ծ. վարդապետի պաշտօնավարութիւնը ամէն կերպով օգտակար եղած է վիճակին, որոշեց մերժել անոր հրաժարականը և միև կողմէ առաջնորդական ընտրութեան հրահանգ տալ:

— Բալուի դաւառ. Ընդհ. Ժողովը, Մշտ Տ. Վարդան Վրդ.-ը Առաջնորդ ընտրած և ընտրութեան տեղեկագիրը զրկած էր Պատրիարքարան. Ժողովը յետ քննութեան, եղած ընտրութիւնը օրինաւոր դատեց և որոշեց հաստատել կատարուած ընտրութիւնը:

— Ամերիկայի Հոգ. Հովիւ Տ. Յովնէփ Եպիսկոպոս Սարաճեան հիմա Աստղբի եկեղեցւոյն քովի տունը վարձած և կահաւորելով Առաջնորդարանի վերածած է: Նիւ Եորքի հայերն ալ տարեկան 1200 թաւէր վարձքով եկեղեցի մը վարձեցին՝ խոցերուն հետ մէկտեղ, այդ շէնքը շատ յարմար պիտի գայ եկեղեցական արարողութեանց համար. բաւական ալ ընդարձակ ըլլալով կընայ շատ մարդ պարունակել. և սակայն ո՛ր հաւատացեալ և ո՛ր ժամ եկող. Ժողովուրդը պաշտած

է իր եկեղեցիէն և չուենք շնորհքով քահանայներ որոնք կարենան փարախ վերադարձնել ընդ որ այդ մոլորեալ ոչնաւները:

— Ս. ՀԱՅՐԱՊԵՏԸ գիր մը զրկած է Ս. Պատրիարք Լօր, Ռուսմանիոյ Հայոց հոգեւոր հովուութեան նկատմամբ: Ինչպէս յայտնի է, Եւրոպիոյ հովիւը զանազան պատճառներով չէ կրցած ցարդ Ռուսմանիա մտնել: Ս. պատրիարք Հայրը Խառն ժողովոյ որոշմամբ այս մասին հարկ եղած միջոցները գործադրելէ յետոյ, արգիւնքը պիտի հաղորդէ Ն. Ս. Օժութեան, որ տրամադրէ է Ռուսմանիոյ Վիճակը, հակառակ պարագային, Պոլսոյ Պատրիարքութեան իրաւասութեան ենթարկել, ինչպէս կը գտնուի արդէն Պուլիարիոյ հովուութիւնը:



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԱՆԳԼԻՍԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԱՌԱՒԵԼՈՒԹԻՒՆԸ:

(Edm. Demolins).

«Արարատ»-ի անցեալ համարում յիշատակած ֆրանսիացի Դէմոլէնը իր «Նոր դաստիարակութիւնը» հիմնում է անգլիական կրթութեան վերայ, որի առաւելութիւնը հետեւեալ կերպով է նկարագրում:

Անգլուսաքսերի գերազանցութիւնը անհերքելի իրողութիւն է: Եթէ և այս բանը ամէն տեղ չեն խոստովանում՝ յայտնապէս, այնու ամենայնիւ հաստատուում է այն երկիւղով, կասկածով, իսկ երբեմն նաեւ ատելութեամբ, որ անգլիացիների դէմ՝ ամէն տեղ երևում է:

Մենք չենք կարող ոչ մի քայլ գործել, որ անգլիացիներին չհանդիպինք: չենք կարող մեր հայեացքը դարձնել մեր վաղեմի երկիրների վերայ, որ այն տեղերում չտեսնենք անգլիական ծածանող գրողակիր:

Անգլուսաքսը մեզ դուրս վաճառեց Հիւսիսային Ամերիկայից, որ մեր ձեռքն էր՝

կանադայից մինչև Լուիզիանայի սահմանները, Հնդկաստանից, Մաւրիիիս կղզուց՝ նախկին իւր ֆրանսիացի և եզրկառուց: Անգլուսաքսը իշխում է Ամերիկայի վերայ, տիրելով կանադա և Հիւսիսային հասանգներին: Աֆրիկէյի վերայ—Հնդկաստանի և Գերմանի միջոցաւ, Ուլիէանիայի վերայ—Աւստրալիայի և Նոր Զելանդիայի միջոցաւ, Եւրոպայի և ամբողջ աշխարհի վերայ—իւր վաճառականութեամբ, արդիւնագործութեամբ և քաղաքականութեամբ:

Աշխարհագրական քարտէզը շատ պարզ ցոյց է տալիս, թէ ինչ ընդարձակութեամբ տարածուել է անգլուսաքսերեան ցեղը, կարծես թէ տիեզերքը կառավարելու նկատմամբ Հռովմէական կայսրութեան ժառանգորդ հանդիսանալով:

Միւս ազգերը, զոր օր. Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան, Ապանիան, Նոյնպէս գաղութներ ունին, բայց առաւելապէս պաշտօնականների գաղութներ: Նոքա երկիրը տիրում են միայն զինուորական ուժով, չեն մտնում երկրի մէջ, չեն կազմակերպում, չեն վերանորոգում, արմատ չեն ձգում այնտեղ անգլուսաքսերեան գաղութականի պէս: Ռուսաստանն ու Զինաստանը բռնում են ահագին տարածութիւններ, բայց մեծ մասով անապատ մնացած և քաղաքակրթութեան համար ընդ երկար փակուած:

Իսկ ընդհանրապէս ներկայ ժամանակում անգլուսաքսերը կանգնել են խիստ յառաջագէմ, գործունեայ և եռանդագին քաղաքակրթութեան գլխին: Բաւական է որ նոքա բնակութիւն հաստատեն երկրագնդի որ և է խորշի վերայ, որ իսկոյն կերպարանափոխեն այն վայրը, զարմանալի արագութեամբ մէջը մտցնելով արեւմտեան մշակութեանց նորագոյն կատարելագործութիւնները: Այս մանուկ համայնքները շատ անգամ յառաջագիմութեան ճանապարհում մեղանից տապ են կտրում և գրեթէ արհամարհանօք մեզ կոչում են—Հիւսիսային: Եւ իրօք պէտք է խոստովանենք, որ մենք հնացել ենք այդ նորարարողների համեմատութեամբ: Մի տեսէք, թէ մենք ինչ